բեսս երկրի մերոյ մաքուր 'ի ամենայն կերպ կողմնակալութենէ 'ի գործէ, և լուր պատերազմէ 'ի երկուց կոյս, այսինքն կողմն յազգին իւրոյ և թշնամոյն մերոյ, և կամ կողմն մեր մինչև ժամ խաղաղութեան։

ԳԼՈՒԽ ՅԻԶ.

'Ի ժամանակի պատերազմի և կամ խաղաղութեան եթէ միջէ թշնամեաց և եթէ բարեկամաց, ով ոք քրէական մեղօք մեղուցեալ փախչի և անկանի երկիրն մեր, հովանաւորութեան տանն հայոց անձն նորա զերծցի 'ի մահուանէ պարտուց իւրոց, և գտցի պահպանութիւն, և ոչ ոք ունիցի իշխանութիւն հանել նմայ 'ի տանէն հայոց, բայց եթէ Տեառն յայնմիկ տացէ ներողութիւն մեղաց նորայ 'ի կեանս և ապա եթէ առն այն կամի ելանել 'ի մէնջ, ազատապէս կարէ ելանել առ ուր որ ինքն կամի։

ԳԼՈՒԽ ՅԻԷ.

Ամենայն փախստական 'ի ամենայն ազգէ որ լինիցի եթէ մտցի աշխարհն մեր գտցի պահպանութիւն 'ի մէնջ ըստ Օրինօք մերոյ, բայց եթէ պարտական ոսկոյ և երծաթոյ, ցորենոյ, գինոյ և ձիթոյ և այլն, ամենայն ժամ պարտ է նմայ հատուցանել պարտս իւր ըստ օրինօք, բայց պարտ մեղաց քրէականի որ ազատ լիցի, և եթէ